

ԻԶՈԿՈՆԱԶՈՒՄ 25գ

Դեղաձև. նրբաֆուսկ 1%:

Բաղադրություն. 1գ նրբաֆուսկը պարունակում է ակտիվ նյութ իզոկոնազոլի նիտրատ 10 մգ:

օժանդակ նյութեր: Պոլիսորբատ 60, Սորբիտան ստեարատ, Ցետոստեարիլ սպիրտ, հեղուկ պարաֆին, սպիտակ վալուսկ պարաֆին, մաքրված ջուր:

Դեղաբանական խումբ. Հակասնկային միջոց, արտաֆին կիրառման համար:

Ֆարմակադինամիկա

Իզոկոնազոլ - ունի տեղային հակասնկային և հակաբակտերիալ ազդեցություն: Գործում է ֆունգիստատիկ, ֆունգիցիդների կոնցենտրացիայի ավելացմամբ: Ակտիվ է դերմատոֆիտների Trychophyton, Microsporum, Epidermophyton, բորբոսասնկերի, խմորասնկերի՝ Candida և խմորանման սնկերի դեմ՝ Malassezia furfur (Pityrosporum spp.), ինչպես նաև Corynebacterium minutissimum-ի դեմ՝ էրիթրազմայի գրգռիչ և գրամ դրական բակտերիաների՝ ստաֆիլոկոկի:

Իզոկոնազոլի, ինչպես նաև խմորազոլի ածանցյալների խմբի այլ հակամիկոտիկ դեղամիջոցների գործողության մեխանիզմը կապված է մանրէաբանական բջջի պլազմային թաղանթներում էրգոստերոլի սինթեզի խախտման հետ, որը ապահովում է դեղամիջոցի ֆունգիստատիկ և ֆունգիցիդային ազդեցությունը:

Ֆարմակակինետիկա

Տեղային կիրառման ժամանակ իզոկոնազոլը արագ ներթափանցում է մաշկի տարբեր շերտերը, որտեղ իր առավելագույն ֆանակին հասնում է ֆունգոց 1 ժամ հետո և պահպանվում է մինչև 7 ժամվա ընթացքում, եղջերաթաղանթում մինչև 3500մկգ/մլ, էպիդերմիսում 20մկգ/մլ, իսկ դերմայում 3մկգ/մլ: Նրբաֆուսկը կիրառելուց առաջ եղջերաթաղանթի հեռացումը հանգեցնում է իզոկոնազոլի կոնցենտրացիայի ավելացմանը մոտ 2 անգամ: Իզոկոնազոլի պարունակությունը էպիդերմիսում և եղջերաթաղանթում նույնպես զգալիորեն զերգանցում է դրա նվազագույն կոնցենտրացիան՝ ապահովելով ավելի ուժեղ հակասնկային և արգելակող ազդեցություն պարզաբան միկրոօրգանիզմների վրա (բորբոսասնկեր, դերմատոֆիտներ, խմորիչներ): Իզոկոնազոլը չի մետաբոլիզացվում մաշկի մեջ: Մաշկի միջոցով կլանման միջոցով համակարգային բեռը ցածր է: Բացի այդ, եղջերաթաղանթի հեռացումից հետո ներծծվում է տարբեր ֆանակություն 1-ից 5%: Կլանված իզոկոնազոլի նիտրատը արագ և ամբողջությամբ մետաբոլիզացվում է և արտազատվում օրգանիզմից: Իզոկոնազոլի նիտրատը կարող է հայտնաբերվել եղջերաթաղանթի շերտում և մազի ֆոլիկուլներում օգտագործումից երկու շաբաթ հետո: Որոշ դեպքերում իզոկոնազոլի նիտրատը կարող է հայտնաբերվել մինչև վերջին ընդունումից 14 օր հետո:

Կիրառման ցուցումներ

Մաշկի մակերեսային սնկային ախտահարումներ:

Հարթ մաշկի դերմատոմիկոզներ, ինչպես նաև տեղափայլած միջմատնային մասերում և արտաքին սեռական օրգանների շրջանում:

Մաշկի կանդիդամիկոզ:

Բազմագույն ֆարաֆու:

Էրիթրազմա:

Հակացուցումներ

Գերզգայունություն դեղամիջոցի բաղադրիչների նկատմամբ

Կիրառման ձև և դեղաչափում

Արտաքին օրը մեկ անգամ: Իգոկոնազոլ-Մ ֆուն և բարակ շերտով մաշկի ախտահարված մասերին: Բուժման կուրսը սովորաբար կազմում է 2-3 շաբաթ, միջմատնային միկոզների բուժման ժամանակ մինչև 4 շաբաթ: Հնարավոր է անցկացնել բուժման ավելի երկարատև կուրս , հնարավոր ռեցիդիվներից խուսափելու համար, կլինիկական ախտանշանները անցնելուց հետո շարունակել 1-2 շաբաթ:

Կողմնակի երևույթներ

Առանձին դեպքերում. Քոր, էրիթեմա կամ վեզիկուլյոզիա (բժուիկների առաջացում):

Շատ հազվադեպ. մաշկային ալերգիկ ռեակցիաներ:

Նախագուշացումներ

Դեղորայքը նախատեսված է միայն արտաքին կիրառման համար: Ցանկալի է խուսափել ' հատկապես դեմի շրջանում կիրառելու ժամանակ, աչքի մեջ ընկնելուց:

Կրկնակի վարակների առաջացումից խուսափելու համար պետք է հետևել անձնական հիգիենայի կանոններին (սրբիչների, ներքնագգեստի (ցանկալի է բամբակից) ամենօրյա փոխարինում): Իգոկոնազոլ-Մ կրենով բուժման էֆեկտին հասնելու համար շատ կարևոր է կանոնավոր հիգիենան: Ոտքերի յուրաքանչյուր լվացումից հետո միջմատնային հատվածները պետք է մանրակրկիտ սրբել և ամեն օր փոխել գուլպաները և գուգագուլպաները: Միջմատնային հատվածների բուժման ժամանակ խորհուրդ է տրվում մատների միջև դնել Իգոկոնազոլ-Մ ֆունով ներծծված տամպոն: Եթե Իգոկոնազոլ-Մ շփվում է լատեքսային արտադրանքների հետ (օրինակ՝ պահպանակներ, դիաֆրագմներ), կրենի պարունակության մեջ առկա օժանդակ նյութերի (ստեարատ, պարաֆին) հետևանքով, այդ արտադրանքների օգտագործման անվտանգությունը կարող է նվազել: Այդ դեպքում պետք է դադարեցնել այս դեղի կիրառումը և նշանակել համապատասխան քերասիա:

Հղիություն և կրծքով կերակրում

Հնարավոր կիրառել խիստ անհրաժեշտության և բժշկի հսկողության դեպքում:

Թողարկման ձև

25 գ ալյումինե պարկուհի մեջ, տպագրված թաղանթով, պտտվող գլխիկով; Պարկուհը տեղադրված է սովորաբար սուփի մեջ՝ ներդիր թերթիկով:

Պիտանիության ժամկետ

5 տարի:

Պահպանման պայմաններ

Պահել + 30°C-ից ոչ բարձր ջերմաստիճանում, երեխաների համար անհասանելի վայրում:

Բացթողման կարգ

Դեղատոմսով: